**ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ**
**(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ (ԿՆՃԲԾ)**

**Առաջադրանքի անվանումը**՝ ԿՆՃՅԲԾ-ի լրացուցիչ ֆինանսավորման 1–ին տարվա (2016թ.) ճանապարհների հիմնանորոգման նախագծում

Հայաստանի Հանրապետությունը 45.0 մլն. ԱՄՆ դոլար Համաշխարհային բանկից վարկ է ստացել ՝ Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագրի ֆինանսավորման նպատակով (ԿՆՃՅԲԾ) և մտադիր է այդ գումարից վճարումներ կատարել խորհրդատվական ծառայությունների համար:

Բացի այդ, ՀՀ կառավարությունը դիմել է Համաշխարհային բանկին՝ 40.0 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու համար ԿՆՃՅԲԾ-ը շարունակելու նպատակով:

Խորհրդատվական ծառայությունները (Ծառայություններ) ներառում են ՝

1. Հետազոտություններ և նախագծերի նախապատրաստում (միջազգային լավագույն փորձը հիմք ընդունելով)՝ մոտ 47 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհների հիմնանորոգման նպատակով, որոնք պետք է վերականգնվեն ԿՆՃՅԲԾ-ի լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում 2016թ.-ին, և բնապահպանական կառավարման պլանների (ի նկատի ունենալով առաջադրանքի սոցիալական ասպեկտը) նախապատրաստում
2. Նախագծերի հեղինակային հսկողություն

Ծառայությունները կիրականացվեն երկու առանձին պայմանագրերով՝ միանվագ վճարման պայմանագիր (Նախագծի առաջադրանքի համար) և ժամանակի վրա հիմնված պայմանագիր (Նախագծի հեղինակի վերահսկողության առաջադրանքի համար):
Առաջադրանքը ակնկալվում է սկսվել 2015 թվականի վերջին և ավարտվել 2016 թվականի փետրվար ամսին):
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը նշված ծառայությունները տրամադրելու նպատակով հրավիրում է իրավասու խորհրդատվական կազմակերպություններին (խորհրդատուներին) ներկայացնել հետաքրքրվածության հայտեր: Հետաքրքրված խորհրդատուները պետք է ներկայացնեն տեղեկություններ՝ նշելով, որ որակավորված են և ունեն համապատասխան փորձառություն ծառայություններն իրականացնելու համար: Կարճ ցուցակում ընդգրկվելու չափանիշները հետևյալն են. Խորհրդատուի (որպես կազմակերպություն) ընդհանուր փորձառությունը Առաջադրանքի պահանջներին համապատասխան, Խորհրդատուի (որպես կազմակերպություն) հատուկ փորձառությունը Առաջադրանքի պահանջներին համապատասխան:
Հետաքրքրված խորհրդատուների ուշադրությունը հրավիրվում է Համաշխարահային բանկի <<Ուղեցույց: ՄԶՎԲ վարկերի և ՄԶԸ փոխառությունների և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուի կողմից խորհրդատուների ընտրություն և վարձույթ՝>>2011թ. հունվար, ուղեցույցի 1.9 կետին (<<Խորհրդատուների ուղեցույց>>), որտեղ սահմանված է շահերի բախման վերաբերյալ Համաշխարհային Բանկի քաղաքականությունը:
Որակավորումները հզորացնելու նպատակով՝ խորհրդատուները կարող են միավորվել այլ կազմակերպությունների հետ և համատեղ հայտ ներկայացնել կամ ենթակապալի պայմանագրեր կնքել:
Խորհրդատուն կընտրվի <<Խորհրդատուների ուղեցույցում>> սահմանված <<Որակի և գնի վրա հիմնված ընտրություն>> ընթացակարգի համաձայն:
Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ստորև նշված հասցեով, աշխատանքային օրերին, ժամը 09:00-17:00 (տեղական ժամանակ):
Հայտերը պետք է ներկայացվեն գրավոր (առձեռն կամ փոստով, կամ ֆաքսով, կամ էլեկտրոնային փոստով) ստորև նշված հասցեով մինչև **2015թ. մայիսի 5-ը**՝

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
<<Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ
Տնօրեն պ-րն Է. Սարգսյանին
ՀՀ, Երևան, 0010, Նալբանդյան 28
Հեռ/Ֆաքս: (+374-60) 540 525
Էլ.հասցե: kbadalyan@transportpiu.am; esargsyan@transportpiu.am; tjanoyan@transportpiu.am; hordukhanyan@transportpiu.am